պարհների անցուդարձը դադարի, որ մարդիկ հանգստանան խաղաղ քնով, իսկ իրենք կատարեն մի խաւար գործ... Երբեմն տեսնում էի նրան նոյն աբեղայական կերպարանքով, որպէս երեւաց ինձ «կաթնաղբիւրիէ ձորում: Հանդարտ, չափաւոր քայլերով անցաւ նա իմ մօտից եւ իբրեւ մի խաբուսիկ ուրոական, անյայտացաւ ժայռերի մէջ: Կարծես եւ այժմ լսում էի նրա այն տխուր, անապատական երգը, որ դուրս կոչեց պառաւ կախարդին փոքրիկ Հիւբբիի հետ տերեւախիտ թուփերի միջից: Երբեմն տեսնում էի նրան վանեցի մանրավաճառի հագուստով, եզիդիների իշխանի վրանում: Գեղեցիկ Թուլթին, վրանի վարագոյրի ետեւից, սիրաբորբոք ալքերով նայում էր նրա վրայ, առանց հասկանալու, որ այդ անգութ, խստաբարոյ երիտասարդի սրտում կնոջ սիրոյ համար տեղ չէր մնացել: Երբեմն տեսնում էի նրան «գժիէ տանը, կարծես եւ այդ րոպէում, ներկայանում էր ինձ այն զայրացած դէմքը, թէ որպիսի խորին վրդովմունքով լսում էր նա բարեսիրտ քահանայի տխուր պատմութիւնները՝ հոգեւոր առաջնորդի անկարգութիւնների մասին: Իսկ այժմ տեսնում էի նրան մի օտարոտի արհեստաւորի տանը: Այստեղ նա բժիշկ էր, եւրոպական բարձր ուսում ստացած բժիշկ եւ ինձ հրամայել էր թաքցնել իր հայութիւնը: Ինչո՞ւ էր նա փախչում հայ անունից, ինչո՞ւ էր նա այդպէս տեղերի եւ հանգամանքների համեմատ անդադար կերպարանափոխ լինում: Ահա այդ գաղտնիքը երկար զբաղեցնում էր իմ միտքը, եւ ես մի որոշ եզրակացութեան հասնել չէի կարողանում:

Մի բան, որ աւելի պարզ կերպով նկատում էի, սկսեալ այն օրից, որ ճանապարհորդում էի Ասլանի հետ՝ այն էր, որ նրա խորհրդաւոր տեսակցութիւնները, ամէն տեղ եւ ամէն դէպքում, այնպիսի անձինքների հետ էին լինում, որոնք բողոքում էին երկրի ընդհանուր անկարգութեան դէմ: Եւ այդ տարբեր, զանազան ցեղերին պատկանող անձինքների մէջ կարծես թէ տարածած էր մի գաղտնի թել, որ կապում էր բոլորի սրտերը, բոլորի կամքերը միմեանց հետ: Բայց ո՞ւմ ձեռքումն էր գտնւում այդ թելի ծայրը, ո՞վ էր դարձնում բոլորի կամքերը դէպի մի որոշ նպատակ, այդ գաղտնիքը եւ մինչեւ այսօր մնաց ինձ համար անյայտ: Կարօն, Ասլանը, Որսորդը եւ նրանց բոլոր համախոհները մի-մի գործիքներ էին, որ բաղկացնում էին մի բաւականին բաղադրեալ մեքենայի կազմուածքը: Բայց այն ի՞նչ զօրութիւն էր, որ պտտեցնում էր այդ մեքենան եւ նրան ընթացք եւ ուղղութիւն էր տալիս: Դա, որպէս ինձ թւում էր, այն գերագոյն տիրապետող ոգին էր, որ ինքը գոյութիւն ունի անյայտութեան մէջ, որ իրան պահում է անմատչելի, իսկ իր հզօր, աներեւոյթ ձեռքով կառավարում է մարդկանց սրտերը, մարդկանց մտքերը եւ նրանց ուղղութիւն է տալիս...